ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **21/11/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սիմոն Բաբայանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Կաղլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Համբարձում Ջանոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 21-ի թվով 11-րդ արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
3.Վայոց ձորի մարզի Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արոտներից 3098.30104 հա հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով (Սերվիտուտ) օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
4.Վայք համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու և համայնքի ավագանու 15.02.2022 թվականի թիվ 12-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
5.Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:

6. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
7.Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
8.Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
9.«Վայքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, Վայք համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
10.Վայք համայնքի 2024 թվականի բյուջեյի նախագիծը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Մանուկյան/:
11.ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Բարձրունի բնակավայրում նոր կառուցված ինքնահոս ոռոգման համակարգը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեյին հանձնելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
12.Վայք համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
13.Վայք համայնքի բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքներ իրականացնելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
14. Վայք համայնքի 2023 թվականի տարեկան փոփոխված աշխատանքային պլանը հաստատելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
15.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով.

1.Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող, 10-034-0106-0033 կադաստրային ծածկագրով, 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ արոտ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նպատակային նշանակության հողերի:
2.Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող, 10-034-0106-0034 կադաստրային ծածկագրով, 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ արոտ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նպատակային

նշանակության հողերի:
3.Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող, 10-034-0106-0035 կադաստրային ծածկագրով, 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ արոտ) նպատակային նշանակությունը փոխել որպես
բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նպատակային նշանակության հողերի:
4. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏՆԵՐԻՑ 3098,30104 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշումը և 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 46.2. կետի դ) ենթակետն ու հաշվի առնելով «Ազատեկ» և «Արտավան» բնապահպանական-սոցիալական հասարակական կազմակերպությունների դիմումները և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1652,08006 հա արոտը՝ 1 հեկտարի համար տարեկան 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով, սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 5/հինգ/ տարի ժամկետով տրամադրել «Ազատեկ» բնապահպանական-սոցիալական հասարակական կազմակերպությանը Հարավային Կովկասում էկոմիջանցքների աջակցություն բնապահպանական ծրագիր իրականացնելու նպատակով (համաձայն հավելվածի):
2.Տալ համաձայնություն Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1446,22098 հա արոտը՝ 1 հեկտարի համար տարեկան 375 (երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ վարձավճարով, սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 5/հինգ/ տարի ժամկետով տրամադրել «Արտավան» բնապահպանական-սոցիալական հասարակական կազմակերպությանը Հարավային Կովկասում էկոմիջանցքների աջակցություն բնապահպանական ծրագիր իրականացնելու նպատակով (համաձայն հավելվածի):
3. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.02. 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով.

1.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 12-Ա որոշումը:
2.Սահմանել Վայք համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Լ/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով
և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 11 արձանագրությունը՝

1. Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

.Հռիփսիմե Բագրատի Մաթևոսյան՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ

.Միեր Խաչիկի Խաչատրյան՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ

.Արեգնազան Լուքսեմի Հովհաննիսյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

«Տեղականինքնակառավարմանմասին» օրենքի 18-րդհոդվածի 5-րդմասինև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1–ին հոդվածինհամապատասխան.

1.ՀաստատելՀայաստանիՀանրապետությանՎայոցձորիմարզիՎայք համայնքի 2024-2026 թվականներիմիջնաժամկետծախսերիծրագիրը՝համաձայնհավելվածի:
2. Ընդունելիգիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով.

1.Տալհամաձայնությունհամայնքիղեկավարի առաջարկությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում GIZ –ի կողմից քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերանորոգումն իրականացնելու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով.

1. Տալիամաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանության աջակցությամբ ֆինանսավորմամբ «Մարդկային անվտանգության «Grassroots» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Զառիթափի մանկապարտեզի վերանորոգումն իրականացնելու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար:

2. Սույնորոշումնուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին
«ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի -րդ կետով, ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգի և ժամկետները սահմանելու մասին ՀՀ ՖՆ 08 հունվարի 2016թ. թիվ 2-Ն հրամանով սահմանվածկարգի 40-րդ կետով, Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին օրենքի 14-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով.
1. Հաստատել «Վայքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, Վայք համայնքի ենթակայության համայնքայի ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏԱՇԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդհոդվածի1-ին կետի 5-րդենթակետիև «Հայաստանի Հանրապետության բյուջետայինհամակարգիմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդհոդվածի.

1. Հաստատել Վայք համայնքի 2024թ. բյուջեի նախագիծը՝

ա) եկամուտների գծով՝ 866523,7 հազար դրամ,

բ) ծախսերի գծով՝ 897746,7 հազար դրամ,

գ) հավելուրդը / դեֆիցիտը (պակասուրդը)՝ 31223,0 հազար դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15%-ը:

9. Վայք համայնքի բյուջեի վարչական մասի 2024
թվականի տարեսկզբի ազատ մնացորդից 5022100.0
(հինգ միլիոն քսաներկու հազար մեկ հարյուր դրամ
) գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասից ֆինանսավորման
ենթակա,
սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների մարման՝ էներգետիկ, կապի, կոմուն
ալ ծառայությունների և այլ կրեդիտորական պարտքերի վճարման նպատակով, իսկ մնացած՝
25000000 (քսանհինգ միլիոն դրամ) գումարն ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային
մաս: Վայք համայնքի բյուջեի ֆոնդային մա
սի 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 1200900.4

(մեկ միլիոն երկու հարյուր հազար ինը հարյուր դրամ 40
լումա) գումարն ուղղել կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով /սուբվենցիոն ծրագ
րերի շրջանակներում որպես համայնքի ներդրում /:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ն/

Լսեցին
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱՀՈՍ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 14.10.2021թ. թիվ 1689-Ա որոշմամբ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով և հիմք ընդունելով 16.08.2023թ. ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի թիվ 03/15/4279-2023 գրությունը

1.Տալ համաձայնություն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲ ընկերությանը ՀՀ Վայոց ձոր մարզի, Վայք համայնքի Բարձրունի բնակավայրում նոր կառուցված ինքնահոս ոռոգման համակարգն ամրացնելու, անհատույց օտագործման իրավունքով հանձնելու և նվիրաբերելու համար:
2.Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-0 Դեմ-5 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 15–ին, ժամը՝ 15:00–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

1.Հաստատել Վայք համայնքի Գոմք, Ձառիթափ, Արտավան, Սարավան, Ազատեկ, Արին, Փոռ, Ձեղեա, Հերհեր բնակավայրերի ներբնակավայրային փողոցների և Վայք քաղաքի Իսրայել Օրի փողոցի ասֆալտապատման սուբվենցիոն ծրագրի փաթեթը, համայնքի ներդրում՝ 45%:
1.1Սարավան բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 25 701 690 ՀՀ դրամ:
1.2 Արտավան բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 33 840 070 ՀՀ դրամ:
1.3 Գոմք բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 47 531 620 ՀՀ դրամ:
1.4 Ձառիթափ բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 139 853 010 ՀՀ դրամ:
1.5 Արին բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 47 207 170 ՀՀ դրամ:
1.6 Ձեղեա բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 39 128 110 ՀՀ դրամ:
1.7 Հերհեր բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 51 276 490 ՀՀ դրամ:
1.8 Ազատեկ բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 47 274 280 ՀՀ դրամ:
1.9 Փոռ բնակավայրի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում՝ 30 358 330 ՀՀ դրամ:
1.10 Վայք քաղաք Իսրայել Օրի փողոցի ասֆալտապատման աշխատանքներ ՝ 11 946 370 ՀՀ դրամ:
2.Հաստատել Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 3-րդ փողոցի ասֆալտապատման սուբվենցիոն ծրագրի փաթեթը՝ 77 332 990 ՀՀդրամ, համայնքի ներդրում՝ 50%:
3.Հաստատել Վայք համայնքի Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատման սուբվենցիոն ծրագրի փաթեթը, համայնքի ներդրում՝ 55%:
3.1 ՀՀ Վայոց ձորի Վայք համայնքի Սերս բնակավայրի ներբնակավայրային փողոցների մասնակի ասֆալտապատման աշխատանքներ՝ 44 231 800 ՀՀ դրամ:
3.2ՀՀ Վայոց ձորիՎայք համայնքի Բարձրունի բնակավայրի ներբնակավայրային փողոցների մասն ակի ասֆալտապատման աշխատանքներ՝ 83 382 330 ՀՀ դրամ:
3.3 ՀՀ Վայոց ձորի Վայք համայնքի Խնձորուտ բնակավայրի ներբնակավայրային փողոցների մասնակի ասֆալտապատման աշխատանքներ՝ 35 835 300 ՀՀ դրամ:

3.4 ՀՀ Վայոց ձորի Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրի ներբնակավայրային փողոցների մասնակի ասֆալտապատման աշխատանքներ՝ 12 810 890 ՀՀ դրամ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Վայք համայնքի 2023 թվականի տարեկան փոփոխված աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Ընդունել ի գիտություն, որ համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների և հողերի կառավարման ամենամյա ծրագիրը կազմում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱ ՓՈՓՈԽՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ և 82-րդ հոդվածի 4-րդ կետերին համապատասխան ավագա

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Վայք համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման փոփոխված ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2.Ընդունել ի գիտություն, որ համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների և հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը կազմում եմ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____